



## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

### ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ

1. Գվվառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան կամ ԳՊՀ) ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) խորհուրդը դեկանի նախագահությամբ գործող՝ ֆակուլտետի կառավարման մարմին է, որի որոշումները պարտադիր են ֆակուլտետի բոլոր աշխատակիցների և ուսանողների համար:
2. Ֆակուլտետի խորհուրդը իր իրավասության շրջանակներում քննարկում և լուծում է ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերը:
3. Ֆակուլտետի խորհրդի կազմի մեջ մտնում են՝
  - 1) ֆակուլտետի դեկանը (խորհրդի նախագահ),
  - 2) դեկանի տեղակալը, (տեղակալները),
  - 3) ֆակուլտետի ամբիոնների վարիչները,
  - 4) ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի նախագահը,
  - 5) ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը,
  - 6) ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահը,
  - 7) ֆակուլտետի խորհրդի մնացած անդամները՝ յուրաքանչյուր ամբիոնից երկուական դասախոս, յուրաքանչյուր մասնագիտական բաժնից մեկ ուսանող, համամասնորեն ընտրվում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումներից: Ֆակուլտետի խորհրդի ընտրովի անդամների քանակը կազմում է ֆակուլտետի խորհրդի անդամների 50 տոկոսը,
  - 8) ֆակուլտետի խորհրդի կազմում կարող են ընդգրկվել ֆակուլտետի գործունեության հետ կապված մասնագետներ՝ խորհրդի կազմի միջև 20 տոկոսի չափով:
4. Ֆակուլտետի խորհրդում քննարկվող հարցի բնույթից ելնելով՝ խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Համալսարանի այլ աշխատակիցներ, մասնագետներ:
5. Ֆակուլտետի խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է, և խորհրդի կազմը հաստատվում կամ կազմում փոփոխությունները կատարվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:
6. Ֆակուլտետի խորհրդի քարտուղարին դեկանի ներկայացմամբ նշանակում է ԳՊՀ ռեկտորը:
7. Ֆակուլտետի խորհրդի նիստերը ըստ անհրաժեշտության հրավիրում է դեկանը:
8. Ֆակուլտետի խորհուրդը իրավասու է հրավիրել նաև ընդլայնված կազմով նիստեր, որոնց կարող են մասնակցել ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի անդամները, առանձին ամբիոնների ողջ պրոֆեսորադասախոսական կազմը, կամ ուսանողների մասնագիտական խումբը:
9. Ֆակուլտետի խորհուրդը՝
  - 1) Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում դեկանի, ամբիոնների վարիչների պաշտոնների թեկնածություններ՝ ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչների ընտրության կարգերին համապատասխան, ինչպես նաև լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում համալսարանի ռեկտորին.

- 2) առաջադրում է ԳՊՀ խորհրդում և գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչներին.
- 3) առաջադրում է Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի անդամների թեկնածությունները.
- 4) ձևավորում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի կազմը.
- 5) Համալսարանի ռեկտորին և գիտական խորհրդին առաջարկություններ է ներկայացնում ֆակուլտետի ամբիոններ, լաբորատորիաներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու և վերակազմակերպելու վերաբերյալ.
- 6) լուծում է ֆակուլտետի ուսումնական, մեթոդական և գիտահետազոտական աշխատանքների, ինչպես նաև միջազգային կապերի և գործունեության այլ ոլորտների հարցերը.
- 7) Համալսարանի ռեկտորին, ինչպես նաև ակադեմիական քաղաքականության վարչություն է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները.
- 8) ԳՊՀ գիտական խորհրդին առաջարկություն է ներկայացնում ֆակուլտետի աշխատողին պատվավոր կոչումներ շնորհելու նպատակով.
- 9) քննարկում է ֆակուլտետի ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները.
- 10) քննարկում է ֆակուլտետի կիսամյակային և տարեկան քննաշրջանների արդյունքները.
- 11) ըստ սահմանված կարգի՝ երաշխավորում է գիտական կոչման հավակնորդներին.
- 12) քննարկում և երաշխավորում է մագիստրատուրա և ասպիրանտուրա ընդունվողների, հայցորդ ձևակերպվողների թեկնածությունները, հաստատում է ասպիրանտների անհատական պլանները, ինչպես նաև ասպիրանտների ու հայցորդների տարեկան ատեստացիայի արդյունքները (առկայության դեպքում),
- 13) լուծում է ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների, դրամաշնորհների, գործուղումների վերաբերյալ հաշվետվությունները.
- 14) քննարկում է ֆակուլտետի ամբիոնների որոշումների դեմ ամբիոնի անդամների գանգատները.
- 15) ամփոփում է ուսանողների ուսումնական, նախաավարտական, հետազոտական պրակտիկաների արդյունքները.
- 16) մշակում և իրականացնում է միջոցառումներ ֆակուլտետի ուսանողների կրթության որակը բարձրացնելու ուղղությամբ.
- 17) լուծում է ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված՝ ֆակուլտետի կանոնադրությունից բխող այլ խնդիրներ:
10. Ֆակուլտետի խորհրդի նիստերն իրավագոր են նրա ցուցակային կազմի ձայների պարզ մեծամասնության ներկայության դեպքում:
11. Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են նիստերին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե խորհուրդը քվեարկության այլ կարգ չի սահմանում:
12. Ֆակուլտետի խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նիստը հրավիրում է դեկանի պաշտոնակատարը:
13. Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ամբիոնների, աշխատողների, դոկտորանտների, ասպիրանտների, հայցորդների և ուսանողների համար: Ֆակուլտետի խորհրդի նախագահը կազմակերպում է խորհրդի որոշումների կատարման պարբերական ստուգումներ և անհրաժեշտության դեպքում խորհրդին տեղյակ է պահում դրանց կատարման մասին:
14. Ֆակուլտետի խորհրդի նիստերն արձանագրվում են, որոնք ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:
15. Ֆակուլտետի խորհրդի նախագահը՝
  - 1) հաստատում է խորհրդի նիստի օրակարգը,
  - 2) վարում է խորհրդի նիստերը,
  - 3) կազմակերպում է խորհրդի որոշումների կատարման պարբերական ստուգում և խորհրդի անդամներին տեղեկացնում ընդունված որոշումների կատարման մասին:
16. Նորաստեղծ ֆակուլտետի կազմավորման կամ դեկանի բացակայության դեպքում խորհրդի նիստը վարում է տարիքով ավագ ամբիոնի վարիչը:
17. Խորհրդի այլ լիազորություններ և ընթացակարգեր սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով: